

ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ ՓԲԸ

ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՏԵՂԱԲԱՇԽՍԱՆ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐ

Հաստատված է «ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԲԸ
Գլխավոր գործադիր տնօրենի կողմից 2009թ. օգոստոսի 27-ին
Սույն կանոնը ուժի մեջ կմտնի 2009 թ. սեպտեմբերի 30-ին

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ	3
2. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ	3
3. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ	3
4. ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՅՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻՑ ՊԱՀԱՆՋՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ.....	4
5. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՇԻՎՆԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ.....	4
6. ԲԱՆԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄԱՏՈՒՑԵԼԻՍ	4
7. ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ.....	5
8. ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ	5
9. ՄԱԿԱԳՆԵՐ	5
10. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ	6
11. ՇԱՀԵՐԻ ԲԱԽՈՒՄ	6
12. ՆԵՐՔԻՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ	6
13. ԲՈՂՈՔՆԵՐ	7
14. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ.....	7

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Սույն կանոնները կարգավորում են «ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ» ՓԲԸ-ի (այսուհետև՝ Բանկ) կողմից արժեթղթերի շուկայում իրավաբանական անձանց (այսուհետև՝ Հաճախորդ) արժեթղթերի առաջնային տեղաբաշխման ծառայությունների մատուցման կարգն ու պայմանները:

Սույն կանոնները հանդիսանում են Բանկի և Հաճախորդի միջև կնքվող արժեթղթերի առաջնային տեղաբաշխման ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագրի անբաժանելի մասը, որի դրույթները գերակա են սույն կանոններով սահմանված դրույթների նկատմամբ:

Սույն կանոններին համապատասխան՝ Բանկը արժեթղթերի առաջնային տեղաբաշխման ծառայություններ է մատուցում ՀՀ տարածքում ռեզիդենտ և ոչ ռեզիդենտ իրավաբանական անձանց կողմից թողարկված արժեթղթերի համար:

Սույն կանոնները մշակված են ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ Կենտրոնական Բանկի կողմից սահմանված կանոնակարգերի, արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեությունը կանոնակարգող այլ իրավական ակտերի, Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայի և Հայաստանի Ֆոնդային Բորսայի կանոններին համապատասխան:

2. ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՆԿԻ ՄԱՍԻՆ

Լրիվ անվանումը՝ «ԷՅՉ-ԷՍ-ԲԻ-ՍԻ ԲԱՆԿ ՀԱՅԱՍՏԱՆ» փակ բաժնետիրական ընկերություն

Գտվելու վայրը՝ ՀՀ, ք. Երևան, Տերյան 66

Պետական գրանցումը՝ 25 սեպտեմբերի 1995թ., գրանցման համարը՝ 67

Լիցենզիա՝ Բանկային գործունեության լիցենզիա թիվ 67 տրված է ՀՀ կենտրոնական բանկի կողմից (ինտերնետային կայքը <http://www.cba.am>)

Բանկը արժեթղթերի առաջնային տեղաբաշխման ծառայությունների մատուցման գործունեությունը համատեղում է արժեթղթերի շուկայում այլ ներդրումային ծառայությունների մատուցման և բանկային գործունեության հետ:

3. ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Սույն Կանոններում օգտագործված հասկացություններն ունեն հետևյալ նշանակությունը.

3.1 «Արժեթուղթ». ՀՀ քաղաքացիական օրենսգրքով, ինչպես նաև այլ օրենքներով սահմանված արժեթղթերը (անկախ դրանց ձևից՝ թղթային կամ ոչ թղթային) :

3.2 «Թողարկող» . այն անձը, որը արժեթուղթ է թողարկում կամ իր անունից արժեթուղթ թողարկելու առաջարկություն է անում:

3.3 «Հաճախորդ». անձ, որի հետ Բանկը ունի արժեթղթերի առաջնային տեղաբաշխման ծառայությունների մատուցման վերաբերյալ պայմանագիր:

3.4 «Ներդրող». իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը ձեռք է բերել Արժեթուղթ:

3.5 «Պատասխանատու աշխատակից». անձ, որը Բանկի կազմում և նրա անունից իրականացնում է արժեթղթերի առաջնային տեղաբաշխման ծառայությունների մատուցման գործունեություն:

3.6 «Պայմանագիր». արժեթղթերի տեղաբաշխման ծառայություններից օգտվելու համար Բանկին դիմած անձի և Բանկի միջև կնքված փաստաթուղթ, որով սահմանվում են տվյալ անձի թողարկված արժեթղթերի առաջնային տեղաբաշխման գործընթացի իրականացման, ծառայությունների դիմաց վճարման, հաշվետվությունների ներկայացման և դրանց հետ կապված կողմերի իրավահարաբերությունները:

3.7 «Գնահատում». Հաճախորդի (թողարկողի) ֆինանսական իրավիճակի վերլուծություն, արժեթղթերի՝ որպես ներդրումային գործիքի, որակի բացահայտման և արժեթղթերի նկատմամբ պահանջարկի գնահատման նպատակով:

3.8 «Տեղաբաշխում». արժեթղթերի առաջին վաճառքը Ներդրողին:

3.9 «Երաշխավորված տեղաբաշխում». ներդրումային այս ծառայության մատուցման ժամանակ Բանկը պարտավորվում է ձեռք բերել թողարկված արժեթղթերի չտեղաբաշխված ամբողջ ծավալը:

3.10 «Չերաշխավորված տեղաբաշխում». ներդրումային այս ծառայության մատուցման ժամանակ Բանկը որևէ պարտավորություն չի կրում թողարկված արժեթղթերի չտեղաբաշխված ծավալը սեփական միջոցներով ձեռք բերելու համար:

Սույն Կանոններում օգտագործվող այլ հասկացություններն ունեն այն իմաստը, որը սահմանվում է «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքի, ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված կանոնակարգերի, արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեությունը կանոնակարգող այլ իրավական ակտերի, Հայաստանի Կենտրոնական Դեպոզիտարիայի կանոնակարգի դրույթներին համապատասխան:

4. ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԱՃԱԽՈՐԴԻՑ ՊԱՀԱՆՁՎՈՂ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԸ

- 4.1 Արժեքների տեղաբաշխման առաջնային ծառայություններից օգտվելու ցանկություն ունեցող իրավաբանական անձինք Բանկում բացում են բանկային հաշիվներ՝ ներկայացնելով Բանկի ներքին կանոնակարգերով սահմանված բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը:
- 4.2 Բանկը նախքան Հաճախորդի հետ Պայմանագրի կնքումը Հաճախորդին է տրամադրում տեղեկատվություն Բանկի կողմից մատուցվող ներդրումային ծառայությունների մասին, արժեքների և նրանց հետ առնչվող ռիսկերի մասին և ներդրումային ծառայությունների ստացման հետ առնչվող ծախսերի ու միջնորդավճարների մասին:
- 4.3 Բանկը նախքան Հաճախորդի հետ Պայմանագրի կնքումը, Հաճախորդից ստանում է տեղեկատվություն, մասնավորապես ՀՀ կենտրոնական բանկի կողմից հաստատված "Ազդագիր եւ հաշվետու թողարկողների հաշվետվություններ" կանոնակարգ 4/04-ի համաձայն ազդագրում և նրան կից ներկայացվող փաստաթղթերում ներառվող տեղեկություններ:
- 4.4 Հաճախորդը Բանկին է ներկայացնում այն բոլոր տեղեկությունները և/կամ փաստաթղթերը, որոնք անհրաժեշտ են կարգավորող մարմնում, դեպոզիտարիայում և ֆոնդային բորսայում համապատասխան փաստաթղթերի պատշաճ գրանցման համար:
- 4.5 Հաճախորդը գրավոր տեղեկացնում է Բանկին բոլոր այն փաստաթղթային լրացումների և փոփոխությունների մասին, որոնք Հաճախորդը կներկայացնի կարգավորող մարմնին և ֆոնդային բորսային՝ տեղաբաշխված արժեքների շրջանառության ամբողջ ժամանակահատվածի համար :
- 4.6 Այն դեպքում, եթե Բանկը Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկատվության հիման վրա գտնում է, որ թողարկվող արժեթուղթը չի համապատասխանում շուկայի պահանջներին և/կամ ներկայացված տեղեկությունները թերի են , ապա Բանկը զգուշացնում է Հաճախորդին այդ մասին:
- 4.7 Բանկը հիմնվում է Հաճախորդի կողմից տրամադրված տեղեկությունների վրա, բացառությամբ եթե գիտեր կամ կարող էր իմանալ, որ տեղեկատվությունն ակնհայտորեն հնացած է, ոչ ճշգրիտ կամ ոչ լիարժեք:

5. ՀԱՃԱԽՈՐԴՆԵՐԻ ՀԱՇՎՆԵՐԻ ԲԱՑՈՒՄԸ

Սույն Կանոնների 4-րդ գլխում նախատեսված տեղեկությունները փոխանակելուց հետո, Հաճախորդի և Բանկի միջև կնքվում է Պայմանագիր, որից հետո երկու աշխատանքային օրվա ընթացքում Բանկում Հաճախորդի անունով կարող է բացվել բանկային հաշիվներ՝ Բանկի համապատասխան ներքին ընթացակարգերով սահմանված կարգով:

6. ԲԱՆԿԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՍԱՏՈՒՑԵԼԻՍ

- 6.1 Բանկը իրականացնում է թողարկվելիք արժեքների գրանցման համար անհրաժեշտ աշխատանքներ, առաջնային տեղաբաշխում, իրացվելիք ստեղծում և պահպանում:
- 6.2 Սույն Կանոնների 6.1 կետում նշված ծառայությունները Բանկը իրականացնում է հետևյալ հաջորդականությամբ.
 - գնահատման փուլում Բանկը իրականացնում է Հաճախորդի ֆինանսական վիճակի վերլուծություն, արժեքների՝ որպես ներդրումային գործիքի, որակի բացահայտման և դրանց նկատմամբ պահանջարկի գնահատման նպատակով
 - արժեքների գրանցման գործընթացին Բանկի մասնակցությունը կայանում է նրանում, որ Բանկը աջակցում է ազդագրի համապատասխան մասերի կազմման և կարգավորվող մարմնին գրանցման նպատակով ներկայացնելու գործում
 - Բանկը իրականացնում է անհրաժեշտ փաստաթղթերի նախնական ներկայացում արժեքները ֆոնդային բորսայի համապատասխան հարթակում ցուցակելու համար:
 - Բանկը հայտնաբերում է արժեքների հանդեպ հետաքրքրություն և պահանջարկ ունեցող պոտենցիալ ներդրողներին և առաջարկում է նրանց ձեռք բերել արժեքները:
 - Բանկը իր անունից, որպես բրոքեր, կնքում է առաջնային տեղաբաշխման գործարքներ, ինչը իր հերթին կարգավորվում է Բանկի արժեքների շուկայում բրոքերային ծառայությունների մատուցման ներքին կանոններով և պայմանագրով:
 - Բանկը, որպես դիլեր կարող է ձեռք բերել արժեքներ, ոչ ավել քան բաժանորդագրության ընթացքում չբաժանորդագրված արժեքների ծավալը՝ բաժանորդագրման արդյունքների ամփոփումից հետո:

- Բանկը գրանցում է գործարքները Կենտրոնական Դեպոզիտարիայում հատուկ հաշիվներին կամ հաշվին: Այն դեպքում, երբ Բանկը ինքն է հանդես գալիս որպես ենթասպահառու, գործարքների գրանցումները և պահառուական գործունեությունը կարգավորվում են համաձայն Բանկի արժեթղթերի շուկայում պահառության ծառայությունների մատուցման ներքին կանոնների և պայմանագրի:
 - Բանկը, Հաճախորդի ցանկության և համապատասխան պայմանագրի ստորագրման դեպքում, հնարավոր ամենակարճ ժամկետում պատշաճ ձևով դիմում է ֆոնդային բորսա, Հաճախորդի թողարկած արժեթղթերի համար Մարքեթ Սեյքերի կարգավիճակ ստանալու համար:
- 6.3 Բանկը պարտավորվում է գործադրել լավագույն ջանքերը արժեթղթերի թողարկման ազդագիրը ներառող հայտարարագրի համապատասխան մասերը կազմելու և այն գրանցման նպատակով կարգավորող մարմնին ներկայացնելու գործընթացին Հաճախորդին աջակցելու, արժեթղթերի ներդրողներին վաճառքը իրականացնելու համար:
- 6.4 Բանկը պարտավորվում է գործադրել լավագույն ջանքերը երկրորդային շուկայում արժեթղթերի իրացվելիության ստեղծման և պահպանման նպատակով:

7. ՀԱՃԱԽՈՐԴԻՆ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ԵՎ ՁԵՎԸ

- 7.1 Արժեթղթերի առաջնային տեղաբաշխման ընթացքում վաճառքի, իսկ երկրորդային շուկայում առքի/վաճառքի յուրաքանչյուր գործարքը կնքելուց հետո Բանկը մինչև գործարքի կնքման հաջորդ աշխատանքային օրվա ավարտը, Հաճախորդի հետ համաձայնեցված կապի միջոցներով, գործարքի կնքման վերաբերյալ հաշվետվություն է ներկայացնում Հաճախորդին (ընթացիկ հաշվետվություն), որտեղ ներառվում է նվազագույն տեղեկատվություն գնված/վաճառած արժեթղթերի ծավալի և գնի վրաբերյալ (բացառությամբ այն գործարքների, որոնք չեն կնքվել Բանկի կողմից կամ որոնց կատարման մասին Բանկը չէր կարող տեղեկացված լինել):
- 7.2 Բանկը, Պայմանագրով նախատեսված դեպքում, յուրաքանչյուր ամսվա համար մինչև տվյալ ամսին հաջորդող ամսվա 10-ը, Հաճախորդի հետ համաձայնեցված կապի միջոցներով, Հաճախորդին տրամադրում է վերջինիս արժեթղթերով երկրորդային շուկայում կատարված գործարքների վերաբերյալ հաշվետվություններ (պարբերական հաշվետվություններ), որտեղ ներառվող տեղեկատվության նվազագույն տարրերը սահմանվում են Բանկի և Հաճախորդի միջև կնքված Պայմանագրով (բացառությամբ այն գործարքների, որոնք չեն կնքվել Բանկի կողմից կամ որոնց կատարման մասին Բանկը չէր կարող տեղեկացված լինել):

8. ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Տեղաբաշխման սկիզբը չի կարող լինել ավելի շուտ, քան կարգավորող մարմնի կողմից ազդագիրը գրանցելուն հաջորդող 5-րդ աշխատանքային օրը:
Տեղաբաշխման ժամկետը կարող է սահմանվել պայմանագրով:

9. ՍԱԿԱԳՆԵՐ

- 9.1 Ծառայությունների սակագները / միջնորդավճարները սահմանվում են Բանկի կողմից Բանկի և Հաճախորդի միջև տեղի ունեցած բանակցությունների արդյունքում փոխադարձ համաձայնեցված չափերով, տեսակներով և ամրագրվում են պայմանագրում: Բանկն իրավունք ունի տարբերակված սակագներ սահմանել Հաճախորդի հետ կնքվող Պայմանագրով:
- 9.2 Սակագները սահմանվում են Հաճախորդի ֆինանսական վիճակի գնահատման, արժեթղթերի նկատմամբ պահանջարկի բացահայտման, արժեթղթերի վաճառքի նախապատրաստման աշխատանքների կատարման ծառայությունների դիմաց վճարման համար: Ինչպես նաև կողմերը գալիս են փոխադարձ համաձայնության տեղաբաշխվող արժեթղթերը Բանկին հանձնելու ժամանակ տրամադրվող զեղչի չափի վերաբերյալ, ինչը ամրագրվում է պայմանագրով:

10. ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ

- 10.1 Բանկի աշխատակիցները պարտավոր են ապահովել Հաճախորդի հաշիվների վերաբերյալ ծառայողական տեղեկությունների գաղտնիությունը: Գաղտնի են համարվում հետևյալ տեղեկությունները՝
- Հաճախորդի մասին տեղեկությունները
 - Հաճախորդի կողմից կատարվող գործառնությունների վերաբերյալ տեղեկությունները
 - Հաճախորդի կողմից ներկայացված հանձնարարականների վերաբերյալ տեղեկությունները
 - այլ տեղեկությունները, որոնց գաղտնիության վերաբերյալ առկա է Հաճախորդի գրավոր դիմումը կամ նման տեղեկատվությունը դասվել է գաղտնի տեղեկությունների շարքին Պայմանագրի կամ ՀՀ օրենսդրության պահանջներին համապատասխան:
- 10.2 Բանկում վարվող արժեթղթերի հաշիվների վերաբերյալ տեղեկությունները կարող են տրամադրվել միայն Հաճախորդին, նրա լիազորված ներկայացուցչին և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ անձանց՝ Հաճախորդին պատկանող արժեթղթերից բխող իրավունքների իրականացման համար: Սույն կետում նշված տեղեկությունները կարող են տրամադրվել երրորդ անձանց՝ բացառապես օրենքով նախատեսված հիմքերով և կարգով:

11. ՇԱՀԵՐԻ ԲԱՆՈՒՄ

- 11.1 Բանկի աշխատակիցները պարտավոր են պահպանել աշխատանքային բարձր կարգապահություն, թույլ չտալ շահերի բախում իրենց անձնական և/կամ Հաճախորդի գործարքները կատարելիս, պատշաճ կերպով իրականացնել ներդրումային առաջարկությունների կազմումն ու տարածումը՝ շահերի հնարավոր բախումները կանխելու համար:
- 11.2 Բանկի աշխատակիցները պարտավոր են խուսափել շահերի բախում առաջացնող իրավիճակներից, մասնավորապես Բանկի ղեկավար հանդիսացող աշխատակիցը պարտավոր է բացառել իր կողմից որևէ ներդրումային առաջարկի հաստատումը և բանակցային գործընթացների վարումը այն պոտենցիալ Ներդրողների հետ, որոնց համար տվյալ ղեկավար անձը կարող է հանդիսանալ փոխկապակցված անձ:
- 11.3 Բանկի աշխատակիցներին արգելվում է իրականացնել սպեկուլյատիվ գործառնություններ Ներդրողներից ստացված տեղեկատվության հիման վրա:
- 11.4 Ներդրողից ստացված գաղտնի համարվող տեղեկատվությունը ոչ մի դեպքում չպետք է օգտագործվի ի նպաստ Բանկի կամ այլ անձի առանց Ներդրողի համաձայնության:

12. ՆԵՐՔԻՆ ՎԵՐԱՀՄԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

- 12.1 Բանկի ներքին աուդիտի ստորաբաժանումը պատասխանատու է արժեթղթերի շուկայում Բանկի մասնագիտացված գործունեության վերահսկման համար: Այն անձը կամ անձինք, որոնք ներգրավված են լինելու Ներդրումային գործունեության վերահսկման գործառնությունների մեջ, պետք է ունենան արժեթղթերի շուկայում գործունեության համապատասխան մասնագիտական գիտելիքներ:
- 12.2 Արժեթղթերի շուկայում մասնագիտացված գործունեության ներքին վերահսկողության նպատակները ներքին վերահսկողության հիմնական ուղղությունների շրջանակներում հետևյալն են՝
- ապահովել Բանկի կողմից մասնագիտացված գործունեության իրականացման ընթացքում Օրենքով, դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական ակտերով, ԷՂՀ-Էս-Բի-Սի Խմբի կանոններով սահմանված պահանջների պահպանումը,
 - ապահովել Բանկի Հաճախորդների իրավունքների և օրինական շահերի պաշտպանությունը:
- 12.3 Արժեթղթերի շուկայում Բանկի մասնագիտացված գործունեության ներքին վերահսկողության հիմնական ուղղություններն են՝
- ներքին հաշվառմանը ներկայացվող պահանջների վերահսկողությունը,
 - ծառայողական տեղեկատվության պահպանմանը և տրամադրմանը ներկայացվող պահանջների վերահսկողությունը,
 - ֆիդուցիար պարտականությունների վերահսկողությունը,
 - շահերի բախմանը ներկայացվող պահանջների վերահսկողությունը,
 - արժեթղթերի հրապարակային առևտրի ներկայացվող պահանջների վերահսկողությունը,
 - մասնագիտացված որակավորման պահանջների վերահսկողությունը,
 - մասնագիտացված գործունեությունը կարգավորող, այդ թվում՝ ներքին կանոնների պահպանման վերահսկողությունը:

13. ԲՈՂՈՔՆԵՐ

Արժեթղթերի տեղաբաշխման ծառայությունների մատուցման հետ կապված բողոքների ընդունումը և քննարկումը կատարվում է «Բողոքների ընդունման և քննարկման» Բանկի ընդհանուր կարգի համապատասխան:

14. ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՆՈՆՆԵՐՈՒՄ

- 14.1 Սույն Կանոններում փոփոխությունները և լրացումները կատարվում են Բանկի կողմից միակողմանիորեն:
- 14.2 Սույն Կանոններում փոփոխությունները և լրացումները կատարելու մասին տեղեկացումը Հաճախորդին կատարվում է նշված փոփոխությունները Բանկի ինտերնետային կայքում՝ <http://www.hsbc.am> տեղակայելու միջոցով, ընդ որում կայքում պարտադիր նշվում է նաև այդ փոփոխությունների տեղակայման ամսաթիվը:
- 14.3 Սույն Կանոններում Բանկի կողմից կատարված բոլոր փոփոխություններն ու լրացումները, որոնք կատարվել են Բանկի նախաձեռնությամբ և կապված չեն գործող օրենսդրության փոփոխությունների հետ, ուժի մեջ են մտնում և Հաճախորդի համար դառնում են պարտադիր Բանկի ինտերնետային կայքում տեղակայելուց 10 (տասն) օր հետո:
- 14.4 Բանկի կողմից սույն Կանոններում կատարված բոլոր փոփոխությունները, որոնք կապված են գործող օրենսդրության, առևտրի կազմակերպիչների կանոնների և կանոնակարգերի փոփոխությունների հետ, ուժի մեջ են մտնում վերջիններիս ուժի մեջ մտնելու պահից: